ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով
Պահուստի ինքնավար միացման /ՊԻՄ/ սարք ձեռքբերման
գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 27.07.2018թ. ժամը 16.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/
Ս. Դավթյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Հ. Հարությունյանը
Ա. Պողոսյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Ա. Գաբրիելյանը
Ա. Պետրոսյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

Հանձնաժողովը արձանագրեց

1. **Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՑ/ կարիքների համար պահուստի ինքնավար միացման /ՊԻՄ/ սարքի ձեռքերման նպատակով ս.թ. հուլիսի 20-ին էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /Ընթացակարգ/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով ՀՀՌՑ-ի վարչական շենքում, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեում, ս.թ. հուլիսի 27-ին, ժամը 16.00-ին:

2. Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, տվյալները

N	Մասնակցի անվանումը	էլ. փոստի հասցեն	ՀՎՀՀ
1	Սմարթ Էլեկտրոնիկս ՍՊԸ	Yerevan.electro@gmail.com	02262902
2	Յունիմայն ՍՊԸ	uniminellc@gmail.com	01015289
3	ԱՋ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ	xachagir@mail.ru	84485538
4	ԱՐԴՈՆԿ ՍՊԸ	ardonkllc@gmail.com	00893713

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Յունիմայն, ԱՐԴՈՆԿ ՍՊԸ-րի, ինչպես նաև ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3.2 Սմարթ Էլեկտրոնիկս ՍՊԸ կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ Հավելված 5 գնային առաջարկի. փաստաթուղթ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չէ մասնակցի կողմից /գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան/:

4. Մասնակիցների առաջարկած գները, նախահաշվային գինը

ՀՀ դրամ

N	Մասնակիցների անվանումը	1 չափաբաժին Պահուստի ինքնավար միացման /ՊԻՄ/ սարք		
		Նախահաշվային գին՝ 2 500 000 ՀՀ դրամ , ներ. ԱԱՀ		
		արժեք	ԱԱՀ	ընդհանուր գումար
1	Սմարթ էլեկտրոնիկս ՍՊԸ	1 980 000	-	1 980 000
2	Յունիմայն ՍՊԸ	1 435 680	287 136	1 722 816
3	ԱՁ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ	2 490 000	-	2 490 000
4	ԱՐԴՈՆԿ ՍՊԸ	1 750 000	350 000	2 100 000

5. <u>Հանձնաժողովը որոշեց</u>

5.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ մերժել Սմարթ էլեկտրոնիկս ՍՊ ընկերության հայտը /հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.2 Համաձայն Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝
ա) առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Յունիմայն ՍՊԸ-ն
բ) երկրորդ տեղը՝ ԱՐԴՈՆԿ ՍՊԸ-ն
գ) երրորդ տեղը՝ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ ԱՁ-ն

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.3 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.4 Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակից Յունիմայն ՍՊԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 02.08.2018թ. ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրերը/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.5 Գնահատման նիստը հրավիրել ս.թ. օգոստոսի 3-ին, ժամը 12.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ Ս. Դավթյան

անդամներ՝ Հ. Հարությունյան

Ա. Պողոսյան

Ա. Գաբրիելյան

Ա. Պետրոսյան

քարտուղար՝ Մ. Նիկոլյան